ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է

1) տատանումների թափից
2) տատանումների հաճախականությունից
3) տատանումների տևողությունից
4) տատանումների ուժգնությունից

2 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն
2) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ
3) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
4) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր

3 Մեծ սեքստան կազմված է

1) 6 աստիճանից և 5 տոնից
2) 6 աստիճանից և 4.5 տոնից
3) 7 աստիճանից և 6 տոնից
4) 7 աստիճանից և 5.5 տոնից

4 Մծց.5-ն այն ինտերվալն է, որը

1) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից
2) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից
3) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից
4) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից

5 Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
2) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով
3) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով
4) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով

6 Մեծացրած սեքստակորդի կառուցվածքն է.

1) մ.3 + մծց.3
2) մծց.4 + փ.3
3) մք.4 + մ.3
4) փքց.4 + մ.3

7 Կվարտսեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
2) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
4) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

8 D_2 - ը կառուցվում է

1) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
2) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 +փ.3 + փ.3
4) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3

9 VII_7- ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + փ.3 + փ.3
2) փ.3 + մ.3 + փ.3
3) փ.3 + փ.3 + մ.3
4) մ.3 + փ.3 + փ.3

10 II_5^6-ը հարմոնիկ մաժորում

1) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
2) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
3) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2
4) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3

11 Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

1) հնչյունաշար
2) գամմա
3) արպեջիո
4) տոնայնություն

12 Համանուն տոնայնություններն ունեն

1) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
2) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
3) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

13 Մելոդիկ մաժորին բնորոշ է

1) 6^{+} աստիճանը
2) 7^{+} աստիճանը
3) 6^{-}, 7^{-} աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս
4) 6^{-}, 7^{-} աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս

14 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Իոնական, Կրկնակի հարմոնիկ, Դորիական
2) Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական
3) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական
4) Միքսոլիդիական, Կրկնակի մեծացրած, Փոյուգիական

15 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 6^{+}, 7^{+} աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
2) 6^{-}, 7^{-} աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
3) 6^{+}, 7^{+} աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
4) 6^{-}, 7^{-} աստիճանները վարընթաց կարգով շարժվելիս

16 Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

1) մետր
2) չափ
3) տակտ
4) ռիթմ

17 Տևողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են.

1) սեպտոլը, սեքստոլը, տրիոլը
2) սեքստոլը, կվինտոլը, տրելը
3) սինկոպան, տրիոլը, կվարտոլը
4) դուոլը, տրեմոլոն, սեպտոլը

18 Բարդ և խառը չափերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն կամ տարբեր պարզ տակտերից
2) բարդ չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից
3) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից
4) բարդ չափերը բաղկացած են միևնույն տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր տակտերից

19 Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

1) հնչյունների քանակն է
2) պարզ չափերի քանակն է
3) նոտաների քանակն է
4) տակտերի քանակն է

20 նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

1) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը
2) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի սոլ նոտայի տեղը
3) բասի բանալի և ցույց է տալիս փոքր օկտավայի ֆա նոտայի տեղը
4) բասո-պրոֆունդային բանալի և ցույց է տալիս մեծ օկտավայի ֆա նոտայի տեղը

21 Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

1) տրիոլ
2) տրեմոլո
3) տրիո
4) տրել

22 Հետևյալ տերմինները՝ **Prestissimo**, **Agitato**, **Amoroso**, **Doloroso, Brilliante** նշանակում են (ըստ հերթականության)

1) ծայրահեղ արագ, հուզված, սիրով, թախծալի, փայլուն
2) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիծով
3) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
4) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ

23 Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

1) խիտ, լայն և խառը
2) խիտ և լայն
3) խիտ և խառը
4) լայն և խառը

24 Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

1) կոնտրապունկտ
2) իմիտացիա
3) ֆուգա
4) կանոն

25 Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

1) հնագույն, խիստ և ազատ
2) հնագույն, խիստ և խառը
3) հնագույն, խառը և ազատ
4) հնագույն և ազատ

26 Ռոնդոն այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման.

1) ABACA
2) ABCAB
3) ABACAB[1]A
4) ABCBA

27 Հայ ժողովրդական երաժշտության ճյուղերն են.

1) հոգևոր երգ, գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ
2) գեղջկական երգ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ
3) գեղջկական երգ, քաղաքային երգ, հոգևոր երգ
4) տաղային արվեստ, գուսանա-աշուղական արվեստ, քաղաքային երգ

28 Հայ ժողովրդական երաժշտությունը

1) պոլիֆոնիկ է
2) հոմոֆոն է
3) մոնոդիկ է
4) հարմոնիկ է

29 Հայկական նոտագրության ստեղծողն է.

1) Կոմիտասը
2) Գաբրիել Երանյանը
3) Նիկողայոս Թաշչյանը
4) Համբարձում Լիմոնջյանը

30 Հայ ժողովրդական երաժշտության ձայնակարգերը ձևավորվում են

1) տետրախորդների հաջորդման սկզբունքով
2) օկտավաների շղթայման միջոցով
3) տրիխորդների հաջորդման սկզբունքով
4) տետրախորդների շղթայման սկզբունքով

31 Հորովելները

1) կանանց աշխատանքային երգեր են
2) պանդխտության երգեր են
3) տղամարդու աշխատանքային երգեր են
4) պարերգեր են

32 Ո՞ր շարքում են միայն հայ գեղջկական երգի ժանրեր

1) աշխատանքային, ծիսական, պանդխտության
2) աշխատանքային, ծիսական, դրամատիկական
3) Անտունիներ, օրորներ, քայլերգեր
4) հայրենասիրական, ռոմանս, օրորներ

33 Սանթուրը ժողովրդական նվագարան է,

1) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք
2) որը պատկանում է լարային- հարվածային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք
3) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի խրոմատիկ լարվածք
4) որը պատկանում է լարային- կսմիթային խմբին, և ունի դիատոնիկ լարվածք

34 Ո՞վ է հայկական քանոնի դպրոցի հիմնադիրը.

1) Անժելա Աթաբեկյան
2) Ծովինար Հովհաննիսյան
3) Ալվարդ Միրզոյան
4) Խաչատուր Ավետիսյան

35 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ թառահար.

1) Հովհաննես Դարբինյան
2) Մարտին Խաչատրյան
3) Իլյա Մինասյան
4) Ջիվան Գասպարյան

36 Նշվածներից ո՞վ է հայտնի հայ ուդահար.

1) Հովհաննես Դարբինյան
2) Մարտին Խաչատրյան
3) Միհրան Դեմիրճյան
4) Վաչե Հովսեփյան

37 Ո՞վ է «Ծամերով պարի» հեղինակը

1) Ծովակ Համբարձումյան
2) Գրիգոր Հախինյան
3) Արզաս Ոսկանյան
4) Խաչատուր Ավետիսյան

38 Նշվածներից ո՞րն է Սայաթ- Նովայի երգը.

1) Ախ, Մարալ ջան
2) Լեպհո լե-լե
3) Նա մի նազ ունի
4) Նազանի

39 Ո՞ր գործիքներն են կազմում Սազանդարների խումբը.

1) քամանչա, թառ, դափ
2) քամանչա, թառ, դհոլ
3) դհոլ, զուռնա, դուդուկ
4) քամանչա, դուդուկ, դափ

40 Ո՞վ է Արևելյան ժողգործիքների սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիրը.

1) Վարդան Բունի
2) Սաշա Օգանեզաշվիլի
3) Ալեքսանդր Սպենդիարյան
4) Արամ Մերանգուլյան

41 Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

1) Ռոմանոս Մելիքյան
2) Կոմիտաս
3) Տիգրան Չուխաջյան
4) Բարսեղ Կանաչյան

42 Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

1) Գրիգոր Եղիազարյան
2) Ալեքսանդր Հարությունյան
3) Արամ Խաչատրյան
4) Առնո Բաբաջանյան

43 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

1) Անուշավան Տեր-Ղևոնդյան
2) Ղազարոս Սարյան
3) Տիգրան Մանսուրյան
4) Էդվարդ Միրզոյան

44 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բաբաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.

1) պուանտիլիստական
2) մոդալ
3) դոդեկաֆոն
4) պոլիֆոնիկ

45 Ո՞վ է հայկական առաջին քառաձայն պատարագի հեղինակը.

1) Մակար Եկմալյան
2) Կոմիտաս
3) Քրիստոփոր Կարա-Մուրզա
4) Արմեն Տիգրանյան

46 Գրիգոր Նարեկացին առավել հայտնի է իր

1) շարականներով
2) երգերով
3) սաղմոսներով
4) տաղերով

47 Ավետ Տերտերյանի ո՞ր սիմֆոնիայի կազմի մեջ են ներառվել ազգային փողային գործիքներ.

1) թիվ 3
2) թիվ 7
3) թիվ 1
4) թիվ 8

48 Ո՞ր բալետում է Էդգար Հովհաննիսյանն օգտագործել ժողովրդական մեղեդիներ.

1) «Ժաննա դ՛Արկ»
2) «Անտունի»
3) «Հավերժական կուռք»
4) «Երկնագույն նոկտյուրն»

49 Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը

1) Յոհաննես Բրամս
2) Ֆրանց Շուբերտ
3) Ֆելիքս Մենդելսոն
4) Ֆերենց Լիստ

50 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի ստեղծագործության.

1) «Իվան Սուսանին»
2) «Եվգենի Օնեգին»
3) «Կատերինա Իզմայլովա»
4) «Խովանշչինա»

51 Երգեհոնը

1) ստեղնաշարային լարային գործիք է
2) ստեղնաշարային-փողային գործիք է
3) ստեղնաշարային գործիք է
4) ստեղնաշարային-կսմիթային գործիք է

52 Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական պարերի» հեղինակը.

1) Ֆելիքս Մենդելսոն
2) Ֆերենց Լիստ
3) Յոհաննես Բրամս
4) Ռոբերտ Շուման

53 Ո՞ր կոմպոզիտորը չի պատկանում ռոմանտիզմի շրջանին.

1) Յոհաննես Բրամս
2) Ֆերենց Լիստ
3) Ֆրանց Շուբերտ
4) Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկ

54 Ո՞վ է «Տրավիատա», «Ռիգոլետտո», «Դոն Կառլոս» օպերաների հեղինակը.

1) Ջոակինո Ռոսսինի
2) Վինչենցո Բելլինի
3) Ջակոմո Պուչինի
4) Ջուզեպպե Վերդի

55 Դմիտրի Շոստակովիչի թիվ 7-րդ սիմֆոնիան գրվել է. . .

1) 1-ին աշխարհամարտի օրերին
2) 1917թ. հեղափոխության օրերին
3) 2-րդ աշխարհամարտի օրերին
4) 1937թ. ստալինյան բռնությունների օրերին

56 Նշվածներից ո՞րը Ղ. Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի մաս չի կազմում.

1) «Գառնի»
2) «Հին Երևան»
3) «Մայրամուտ»
4) «Արևային պեյզաժ»

57 Ո՞վ է «Սայաթ-Նովա» օպերայի հեղինակը.

1) Ալեքսանդր Հարությունյան
2) Արամ Խաչատրյան
3) Տիգրան Մանսուրյան
4) Էդգար Հովհաննիսյան

58 Նշվածներից ո՞ր վոկալ շարի հեղինակն է Ռոմանոս Մելիքյանը.

1) «Զմրուխտի»
2) «Խոհեր»
3) «Երազ օրեր»
4) «Հայրենիքի ջրեր»

59 Լյուդվիգ վան Բեթհովենի ո՞ր սիմֆոնիայում է հնչում երգչախումբ.

1) թիվ 6
2) թիվ 3
3) թիվ 7
4) թիվ 9

60 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը չի գրել սիմֆոնիա.

1) Յոհաննես Բրամս
2) Ռոբերտ Շուման
3) Ֆրեդերիկ Շոպեն
4) Ֆրանց Շուբերտ